

առաջանալու համար ազգայի և պատմական ավանդության
պահպանը կամ պատմական աշխարհի պահպանը է առաջա-
նալու համար ազգայի և պատմական ավանդության պահպանը
պահպանը կամ պատմական աշխարհի պահպանը է առաջա-
նալու համար ազգայի և պատմական ավանդության պահպանը
պահպանը կամ պատմական աշխարհի պահպանը է առաջա-
նալու համար ազգայի և պատմական ավանդության պահպանը
պահպանը կամ պատմական աշխարհի պահպանը է առաջա-

ԳԱԻԱՌՈԿԱՆ ԿԵԱՆՔ

Կովկասեան ցուցահանդէս.—Արդիւնագործական տագնապ Բագրում.—Երե-
ւանի թեատրան դպրոցը.—Միմիթարեանների տօնը գաւառներում

Ներկայ սեպտեմբեր ամիսը մի հազուաղէսլ նոյնիսկ
բացառիկ կերպարանք ունի. Թիֆլիսում բացուեց ընդհանուր
Կովկասեան ցուցահանդէս և մեր գաւառները նրա մէջ հանդէս
բերին իրանց ամբողջ կուլտուրական կեանքը. Դա մի մեծ տօն
է մեր երկրի համար:

Մեր Նպատակը չէ նկարագրել ցուցահանդէսի այն մա-
սերը, ուր երեան է հանուած մեր գաւառի տնտեսական և կուլ-
տուրական կեանքը. Գաւառական կեանքի քրօնիկագիրը կա-
րող է միայն երեսոյթն արձանագրել և նրա թողած ընդհանուր
տարատորութիւնը լուսաբանել. Ցուցահանդէսը, ինչպէս յայնի
է, բացուած է մի մեծ պատմական գէպքի յօրելեանի առիթով.
գիտենք որ այս սեպտեմբերին լրացել է հարիւր տարի այն
օրից, երբ Կովկասի մի մասը—Վրաստանը, մտաւ ռուսաց տի-
րապետութեան տակ, բաց անելով մի գուռ, որով Ասդրկով-
կասի միւս մասերն էլ հետզհետէ մտան նոյն տիրապետութեան
տակ. Տօնում է այդ յօրելեանը. և այդ տօներին պէտք էր
ցոյց տալ թէ մեր երկրի ազգարնակութիւնը այդ հարիւր
տարիների ընթացքում ինչ առաջադիմութիւն է արել խաղաղ
կուլտուրական զարգացման ասպարէզում. Ահա այդ հարցն էլ
հետաքրքրում է ցուցահանդէս մժնողին:

Առաջադիմութիւն, ի հարկէ, կայ Եթէ 1801 թուականին
մի մեռած մարդ յառութիւն առնէր և գնար տեսնելու Կովկա-
սեան ցուցահանդէսը, նա կը տեսնէր շատ ու շատ այնպիսի
բաներ, որոնց մասին չէին էլ կարող մտածել նրա ժամանա-
կակիցները. Այժմ երկաթուղիներ, այժմ ելեքտրականութիւն,
ահագին գործարաններ, նաւթի, քարածուխի, մետալների շա-
հագործութիւն մեծ չափերով, կատարելագործուած միջոցնե-
րով—ահա ինչքան մեծ նորութիւններ կը տեսնէր նաև Նոյնիսկ

պապենական կաթի ու պանրի գործն էլ ահագին յեղափոխութեան է ննթարկուել. Զքհեղեղեան խնոցիների և այլ նահապետական գործիքների հետ երեան են եկել ինչոր մեքենաներ, ինչոր ուրիշ տեսակ պատրաստութիւններ՝ իւղ պանիր և այլ մթերքներ պատրաստելու համար. Օղեհանութիւնը, պարտիզապնութիւնը, մրգաբուծութիւնը, անասնապահութիւնը կրում են իրանց վրայ յեղափոխութեան կնիք: Նկատում է որ ինչոր նոր հոսանքներ, նոր աշխատողներ են մտել գործերի մէջ, կերպարանափոխել են նրանց, հեռացրել իրանց նախատիպերից, նահապետական ծանրաշարժ գութանն էլ տեղի է տուել նորամուտ, թեթև մեքենաներին...

Կասկած չը կայ որ երկիրը երկար ժամանակ հանդստութիւն և հնարաւորութիւն է ունեցել մտածելու իր պակասութիւնների մասին. կասկած չը կայ որ մի շինարար ձեռք նրան առաջ է մղել, ուսուցել է, կրթել. հասկացնելով չարն ու բարին: Ասիական խաւարից, արեան և արտասուքների լծից ազատուելու տեղի է ունեցել անընդհատ.—դա շօշափելի, շատ խոշոր փաստ է:

Բայց հարց է.—ինչպէս է այդ նոր, կուլտուրական հզօր ոյժը դիպել մեր երկրին: Մենք առաջադիմել ենք. բայց արդեօք մեզմնից ամեն մէկն է առաջադիմել, արդեօք մեր երկրի ամբողջ ազգաբնակութիւնն է մտել այդ նոր հոսանքների մէջ և մեր անտեսական կեանքում ամենքն են արդեօք հնից ազատուելու և նորին հետեւելու արամադրութիւն ցոյց տալիս:

Դիտելով ցուցահանդէսը, դիտելով մեր կուլտուրական առաջադիմութեան նշանները, մենք չենք կարող դրական պատասխան տալ վերոյիշեալ հարցերին: Նորութեան, կատարելութեան ողին մեր ամբողջ երկրի մէջ չէ տարածուել, այլ տեղ է հաստատուել կազմելով բախտաւոր ովագիոներ, փոքրիկ կուլտուրական գաղութներ: Եթէ վերցնենք մեր ժողովրդի միապաղաղ բազմութիւնը, կը տեսնենք որ նա իր երկիրը մշակելու, իր բնութեան հարստութիւնները շահագործելու միջոցների մէջ համարեա բոլորովին միենան է, ինչ էր մի դար առաջ: Հասկացողութիւնները մասսայի մէջ դեռ չեն յեղաշրջուել, դեռ գործիքները և գործերու եղանակը հին նահապետական են. առաջադիմույթին առանձին անհատներ, առանձին դասակարգեր, բայց բազմութիւնը, մասսան անշարժ է մնացել: Որովհետեւ այդ բազմութիւնը հարիւր տարիների ընթացքում կամ շատ քիչ կրթուեց կամ բոլորովին չը կրթուեց:

Եւ ահա մեզանում նկատում է մի այսպիսի տեսարան: Մի կողմից անշարժ ժողովրդի ահագին մասսան, որ նստած

է հողի վրայ, ապրում է ձեռքի աշխատանքով. նա չէ առաջադադիմում, ձեռք չէ բերում աջող կռուելու և իր գոյութիւնը ապահովելու միջոցներ։ Իսկ միւս կողմից լայն հոսանքներով ներս է մտնում արդիւնաբերական առաջադիմութիւնը և խում ժողովրդից նրա արհեստաները, նրա երկրագործական, տնտեսական պարագամունքները, նկատում է, հէնց այդ պատճառով, ոչ թէ առաջադիմութիւն, ժողովրդի տնտեսական կեանքի մէջ, այլ նոյնիսկ անկում, յետադիմութիւն, համեմատած այն զրութեան հետ, որ գոյութիւն ունէր հարիւր տարի առաջ։ Այնպէս որ մնտեսական և արդիւնաբերական նոր ոգին ոչ թէ գալիս է ժողովրդին օգնելու, այլ հանդիսանում է նրա թշնամին, նրան վրկող, հարստահարսղ, Գոնէ այսպէս է իրերի այժմնան զրութիւնը։

Եւ դա հասկանալի է, Երկու կողմերի մէջ աեղի ունի մրցութիւն, բայց դիմադրելու, յաղթող հանդիսանալու միջոցները անհաւասար են։ Երեսակայեցէք մի ժողովուրդ, որ տգէտ է, անպատրասա, իր հին հասկացողութիւնների մէջ խրուած, անօգնական։ Այդպիսի ժողովրդի մէջ է մտնում գիտութեան բոլոր միջոցներով զինուած ախոյեանը և, ի հարկէ, դա ինքը պիտի յաղթէ։ Գիւղացին չունի դրամագլուխ, ոչ էլ էժան վարկ, իր կաթնային տնտեսութիւնը նա չէ կարող արդիւնաւորել նոր միջոցներով, որովհետեւ տգէտ է, որովհետեւ սովորել չէ կարողանում և սովորելուց յետոյ էլ անկարող է գործ կազմակերպել, յոյսը գնելով անկուտչա վաշխառու-վամպիրների վրայ։ Ահա այդ միջնավայրում երեան է գալիս գիտութեամբ զինուած կաթնամատեսը. նա ունի կատարելագործուած գործիքներ, ունի ձեռնուու պայմաններով գրամ վերցնելու հնարաւորութիւն։ Եւ, ի հարկէ, գիւղացին կը մնայ իր նահապետական մածնի, իր տեղական պանրի հետ, որ միայն տեղական կարիքներին կարող է բաւարարութիւն տալ, իսկ նրա աշքի առաջ, նրա նողի վրայ կը գոյանան մեծ կաթնամատեսական գործարաններ, որոնք ահագին շահեր կը տան իրանց տէրերին։

Արհեստաւորը, անայնագործը նոյն այդ զրութեան մէջ են։ Նահապետական միջոյներով գործ կատարելը շատ թանգ է նըստում, որովհետեւ խլում է շատ մեծ ժամանակ, որ կարելի էր օգտակար կերպով գործ ածել ուրիշ կարիքների համար։ Վարձատրել գորգագործի աշխատանքը բաւարար կերպով չէ կարելի, քանի որ նոր ձեի կատարելագործուած գործարանը առաջարկում է նոյն ապրանքը աւելի էժան քնով։ Եւ մեզանում գորգագործը կամ պէտք է բոլորովին թողնէ իր արհեստը կամ պակասեցնէ իր ծախսերը և նոյնպէս էժանացնէ իր ձեռ-

քի աշխատանքը։ Այսպէս առաջ է գալիս արհեստի մնանկում, այսպէս ոչնչանում է ժողովրդի գոյութեան միջոցներից մէկը։ Վերցնենք միւս արհեստներն ու պարապմունքները։ միևնույն երևոյթը կը նկատենք ամեն տեղ, ուր մի կողմում կանգնած է տգէտ ու անօգնական ժողովուրդը, իսկ նրա դիմաց ժամանակակից արդիւնագործութիւնը։

Այժմից իսկ կարելի է նկատել մօտիկ ապագայի պատկերը, Եւրոպական կալտուրան աւելի և աւելի ովազիմներ կը գրաւեն մեր երկրում, առանձին-առանձին անհատներ, ընկերութիւններ, դասակարգեր ամբազեառող զիրք կը բռնեն, իսկ ժողովրդական մասսան, մեր երկրի աղջաբնակութեան ահազին մեծամասութիւնը կը ննայ նոյնքան անօգնական անկարող մրցելու նորեկ ոյժի գէմ և պարտաւորուած կը լինի սորկանալ սպառելով իր ոյժերը անհաւասար կուտի մէջ։

Ահա ինչ է ցոյց տալիս Կովկասեան ցուցահանուէսը։ Արդեօք նա հանդէս բերել է և այնպիսի նոմուններ, որոնք վկայէին թէ մեր ժողովրդի մէջ էլ զարգանում է սեփական շահերը ճանաչելու զիտակցութիւնը։—Շատ թոյլ չափերով, հազիր նկատելի կերպով Եւ դա իրականութեան ճշմարիտ հայելին է։ կեանքի մէջ չը կայ այդ զիտակցութիւնը, հետեաբար նա չէ կարող իննել և ցուցահանուէսում, Եթէ մնայնագործական բաժնում դուք կը հետաքրքրաւէք մի փաքրիկ գործով, ձեր առջև կը բացուի մի լայն հորիզոն և գուք կ'իմանաք թէ ինչ ճանապարհ պիտի անցնէ մեր ժողովուրդը իր անտեսական անկախութիւնը պահպանելու համար։ Քութայիսի նահանգում գոյութիւն ունի մետաքսագործների մի ընկերութիւն, որի անդամների թիւը համում է 9000-ի։ Ինչ նպատակներ ունի այդ ընկերութիւնը։ — Զարգացնել արհեստը ժողովրդի մէջ, ստեղծել ձեռնուու պայմաններ արդիւնաբերութիւնը արտահանելու և վաճառելու համար և այլ այդպիսի կարեւոր հոգածութիւններ—անա ինչի է ձգտում այդ ընկերութիւնը։ Ով փոքր ի շատէ ծանօթ է եւրոպական կեանքին, նա հեշտ կ'ըմբռնէ որ ժողովրդի ինքնազարդացման և տնտեսական առաջադիմութեան ամենահզօր գործ օններից մէկը աշխատանքի այս տեսակ ընկերակցական կազմակերպութիւնն է։

Մենք պէտք է խոստովանենք որ այդ տեսակ կազմակերպութիւնները ընդհանուր երեսյթ չէ մեր երկրի համար Եւ դա, ի հարկէ, շատ ցաւալի է։ Հաճութեամբ արձանագրում ենք և այն փաստը որ լայնատարած և բազմալեզու Անդրկովկասի մէջ միայն վրաց ազգն է, որ հասկացել է զիւղատնտեսական և տնայնագործական ընկերակցութիւնների գաղափարը։ Դժբախ-

տարար, մեր ձեռքում չը կան առաջ փաստեր, այդ կազմակերպութիւնների մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալու համար։ Բայց իբրև նմուշ, կարող ենք բերել հետևեալ փաստը։

Նորեքումս Գուրիական «Միջնորդ» գիւղատնտեսական ընկերութիւնը ներկայացրել է պատշաճաւոր իշխանութեան իր կանոնագրութեան նախագիծը, որ չօշափում է հետևեալ նպատակները։ 1) Աջակցել տեղական գիւղատնտեսներին ձեռք բերելու իրանց անհրաժեշտ գործածական նիւթերը և առհասարակ գիւղական անտեսութեան մէջ անհրաժեշտ առարկաները, նոյնպէս և շահաւետ կերպով վաճառ հանելու իրանց անտեսութիւնների արագագրութիւնները, հում կամ մշակուած գրութեան մէջ, այդ վերջին նպատակով ընկերութիւնը հիմնում է գիւղատնտեսական—տեխնիկական հիմնարկութիւններ՝ տեղական հում նիւթերը մշակելու համար։ 2) Տեղական գիւղատնտեսներից գնել կամ կօմիսիայով վերջնել վաճառելու համար տեղական բերքերը և զրա հետ տալ տէրերին փոխառութիւն, ապահովուած նոյն ապրանքների արժողութեամբ։ ապրանքները գրաւ գնելով փոխառութիւն ստանալ տէրերի համար զանազան կրեդիտային հիմնարկութիւններից և առհասարակ կատարել գիւղատնտեսների ամեն տեսակ յանձնարարութիւնները, որոնք վերաբերում են նրանց պարագմունքներին։

Անա մի ժողովուրդ, որ խելացի կերպով ըմբռնել է իր հարստութեան և բարեկեցութեան գաղտնիքը, կը գայ ժամանակ, երբ այդ ոգին աւելի զարգացած, աւելի լայն տարածուած կը լինի, ժողովրդի ոյժերը մի տեղ հաւաքած, փոխագործ աջակցութեան և ընկերական սկզբունքի վրայ համախմբուած։ Եւ այդ տեսակ ժողովուրդը չի վախենայ կապիտալի և գործարանի մրցութիւնից, այն ինչ այն ժողովուրդները, որոնք տգէտ ու անպատճաստ են, մեծ պատիժ կը կրեն իրանց անշարժութեան համար և բոլորովին կը կորցնեն իրանց հարըստութիւնն ու ոյժերը, կը դառնան ուժեղի ստրուկ։ Հայերը ազգաիսի անպատճաստ և անշարժ ժողովուրդներից են։ Այդպէս է ցոյց տալիս ներկան։

* *

Բագւում նաւթային կրիզիսը շարունակւում է։ Կարծում էին թէ այդ զրութիւնը երկար չի տևի. բայց անա անցել են ամիսներ և տագնապը աւելի ու աւելի մեծ չափեր է ընդունում. այլ ես չեն հաւատում թէ կը վերադառնան այն ժամանակները, երբ նաւթը առասպելական օգուտներ եր տալիս Ուս-

մի և սկսուել է մի նոր շրջան նաւթային արդիւնաբերութեան մէջ. դա խնայողութիւնների, կրծատումների շրջանն է:

Բագուն—մեր գաւառների մի հաւաքածուն է: Նաւթային արդիւնագործութիւնը դարձրեց նրան մի խոշոր կենտրոն, որ իր մէջ հաւաքեց մեր գաւառների բոլոր աշքի ընկնող ոյժերը: Այնտեղ էին դիմում ահազին քանակութեամբ մարդկի՝ աշխատանք գնելու համար, այնտեղ էին տանւում մեր գաւառների դրամական խնայողութիւնները՝ չահագործուելու համար: Եւ այժմ արդիւնաբերական տագնապը հարուածում է ոչ միայն Բագուն, այլ և մեր գաւառները Հաղարաւոր բանուորներ անգործ են մնացել: պաշտօնից զրկւում են և ուրիշ ժառայողներ, իսկ նրանք, որոնք մնում են իրանց տեղերում, հարկադրուած են այժմ ծառայել աւելի քիչ ոռնիկով:

Ահա այս աշխատաւոր գասակարգերի դրութիւնն է, որ արժանի է ուշագրութեան և կարեկցութեան: Հասարակ բանուուրների ահազին մեծամասնութիւնը գեռ այնքան անելանելի դրութեան մէջ չէ. նրանք կարող են վերադառնալ իրանց գիւղերը, զբաղուել իրանց հողով ու անտեսութեամբ. այդ կողմից կրիվար նոյնիսկ բարերար ազդեցութիւն արած կը լինի, սովորեցնելով մարդկանց որ անցաւոր են ոսկու հեղեղները, անցաւոր չէ միայն այն հարստութիւնը, որ տալիս է հողը: Վերջին տարիներում մեզ մօտ շատ էր նկատում այն ցաւալի իրողութիւնը, որ հողագործը անմշակ թողնելով իր զաշտը, վազում էր Բագու՝ արագ ու հեշտ հարստանալու համար: Այժմ դառն իրականութիւնը կը վերադարձն այդ մարդկանց դէպի իրանց գութան ու գոմը:

Այլ է այն մարդկանց դրութիւնը, որոնք հող ու վար չունեն, որոնք հասարակ բանուոր չեն, այլ ապրում են միայն իրանց ծառայութեամբ: Այդպիսի մարդկանց մի ահազին բազմութիւն կայ Բագում և ահա զրանք են մնացել նեղ դրութեան մէջ: Գործատէրերը խնայողութիւն են պահանջում իրանց կառավարիչներից, իսկ զրանք, ինչպէս վկայում են շատ տեղեղեկութիւններ, անինայ կրծատում են ոռնիկները, զրկանքների են ենթարկում ծառայողներին: Հեշտ է երևակայել թէ որքան անտանելի պայմաններ են ստեղծւում այդ տեսակ աշխատաւորների համար: Մեծ մասը ծանրաբեռնուած է ընտանիքներով, հազիւ է կարողանում պահպանել իր ընտանիքի գոյութիւնը: Եւ այժմ, անինայ կրծատումների և խնայողութիւնների շրջանում, այդ դասակարգը չէ կարող նոյն իսկ զժգոհութիւն յայտնել: պարապ մնացած աշխատող ձեռքերի քանակութիւնը մեծ է, այդ դրութիւնից օգուտ են քաղում կառավարիչները և ա-

ունց խեղճահարուելու, առանց աջ ու ձախ նայելու, աշխատում են գործատէրերի օգտին:

Պէտք է աւելացնել որ այդպիսի քաջագրոծութիւններ կատարող կառավարիչները ինտելիգէնտ մարդիկ են, բարձրագոյն ուսում ստացած: Մենք երբէք չէինք կարող վեհ առավիճութիւններ սպասել արդիւնաբերական աշխարհից, ուր հարիւրաւոր մարդկանց շահերը զոհւում են մի անհատի համար. բայց մենք իրաւունք պիտի ունենայինք սպասել այդ աշխարհից փոքրի շատէ կարեկցութիւն, մարդկային զգացմունք: Կրծատել ծախսերը միմիայն ի հաշիւ այն ծառայողների ոռնկի, որոնք չեն կարող խօսել, որոնք նոյն իսկ արդիւնաբերական երջանիկ ժամանակներում միայն քրանող ու աշխատող են եղել, երբէք չեն վայելել մնածամեծ ոռնիկներ և ամեն տեսակ յարմարութիւններ,—այդ անարդարութիւնը մեզ հրէշաւոր է թւում: Կրծատումը եթէ անհրաժեշտ է, պէտք է կատարուի տնտեսութեան բոլոր ճիշդերից. իրանք, գործատէրերը, նրանց կառավարիչները նոյնպէս պիտի ինայողութեան չափի տակ մտնեն: Միայն գայլի բարոյագիտութիւնը կարող է հաշտուել այնպիսի զրութեան հետ, երբ թոյն ու խեղճը պիտի հարստահարուեն՝ մեծերի և ուժեղների բարեկեցութիւնը չը խանգարելու համար:

Մարդկային զգացմունքների, կարեկցութեան մասին յիշեցնելը աւելորդ չէ, թէև արդիւնաբերողները վաղուց են թքել այդպիսի բանների վրայ: Աւելորդ կը լինէր քարոզը միայն այն դէպքում, եթէ բազմաթիւ աշխատաւորները վազօրգք մտածած լինէին իրանց մասին և ինքնօգնութեան գաղափարից առաջնորդուելով: կազմակերպած լինէին իրանց համար միութիւններ, խնայողական, թոշակատու գանձարաններ և այլ այդպիսի հիմնարկութիւններ: Համեմատաբար բարեկեցիկ ժամանակներում նրանք չը մտածեցին «սև օրուայ» մասին և ահա այժմ, երբ եկել է այդ սև օրը, երբ կրիզիսի ահաւոր լծի տակ ընկած գործատէրը նրանց զրկելու, պլոկելու միջոցով է ուզում հաւասարակշռութիւն մտցնել իր բիւջէի մէջ,—ուրիշ ձար չէ մնում այդ անօգնական աշխատաւորների համար, բայց միայն դիմել մարդկային խղճին և արդարութեան:

Թոյլ զէնք է դա գոյութեան կռուի դաշտում: Բայց ինչ արած, երբ չը կան աւելի լաւ, իրական զէնքեր: Աշխատաւոր մարդիկ անհոգ են եղել իրանց ապագայի վերաբերմամբ: Գոնէ խղճան նրանց...



Նաւթային կրիզիսից բնական է անցնել այն սուր կրիզի-

սին, որի մէջ այժմ տառապում է Երևանի թեմական դպրոցը, Սա արդէն հայրենի անկարգութեան առաջացրած աղէտներից մէկն է և ունի իր ցաւալի, բնորոշ պատմութիւնը:

Անցեալ տեսութիւնների մէջ մենք, խօսելով երեցփոխանական հարցի մասին, բացարում էինք տեղի ունեցող ընդհարութիւնները, վէճերը այն հանգամանքով, որ ժաղովուրդը իւրացրել է օրինականութեան զգացմունքը, իսկ հոգեսոր իշխանութիւնը գեռ շարունակում է կամայականութիւնները օրէնքի տեղ դորձագրել: Սա մի ընդհանուր հիւանդութիւն է, մի քաղցկեղ, որ առաջացրել է կատարեալ անիշխանութիւն մեր եկեղեցական գործերի մէջ: Դրութիւնը միշտ երերուն է, միշտ խախուս, միմեանց հակասող կարգագրութիւնները հրապարակ են նետում մի շամեցնող առատութեամբ, բացարձակ, օրը ցերեկով Հասկանալի է որ մի այսպիսի դրութեան մէջ խառն ու շփոթ վիճակ կարող են ունենալ մեր հիմնարկութիւնները՝ պատասխանաւութեան զգացմունք չէ մնացել, իւրաքանչիւր անհատ կարող է իրան ինքնագուխ համարել, աւելի ևս խառնել, տրորել գոյութիւն ունեցող վարչական քաօսը:

Այդ քաօսի մէջ, սակայն, աչքի է ընկնում մի տենդենցիա, որ հետեղականութեան բոլոր կանոններով առաջ է մղւում և արդէն շատ խոչըր նուածութեան արել: Դա կղերական այն սկզբունքն է, որ զրօյի է հաւասարեցնում ժողովրդի նշանակութիւնն ու իրաւունքը: Ոչ մի բան ներկայումս այնքան արհամարհուած, ծալըրի ու հեղնութեան առարկայ չէ դարձած մեղանում, ինչպէս ընտրողական ակզբունքը: Հազարաւոր տարիներով սրբագրուած այն կարգը, որով եկեղեցական բոլոր պաշտօնները ժողովրդութեամբ էին կարգաւորուում և սահմանուում, այժմ մի զատարկ ձայն է դարձել: Ընտրողը հիմա ոչինչ իրաւունք չունի. նա միայն քուէ տուող մի մերենայ է, նա հարկաւոր է մի ձևականութիւն կատարելու համար: Շուտով այդ ձևական նշանակութիւնն էլ կը վերացուի և «նշանակելը»՝ այժմեան հոգեւորականութեան այդ պաշտած դադափարը՝ յաղթող կը հանդիսանայ: ամեն ինչի մէջ: Եւ ճակատագրին հաճոյ էր կարգագրել այնպէս որ այս բոլորը կատարուի մի այնպիսի ժամանակ, երբ մեր եկեղեցու զլուխ է մի հոգեսորական, որ գեռ 1860-ական թուականների սահմանադրական կարգերի ջերմ պաշտպանն էր և ասում էր. «Արիմեան սահմանադրական ծնած է»:

Կղերական ոգին, ինչպէս ասացինք, առաջ է տանում իր յաղթական արշաւանքը անսայթաք, լաւ ծրագրած հետեղականութեամբ: Մնացել են չորս հատ թեմական դպրոցներ և ահա

այդտեղ են այսմ տառապանքներ ստեղծում կղերականութեան ճիգերը։ Մի ժամանակ ոչնչացրած էր ժողովրդական ներկայացուցաւթիւնը դպրոցական գործերի մէջ։ Շուշու թեմական դպրոցը կառավարում էր նշանակութի հոգաբարձուներով Բայց անցեալ տարուայ ամառը յանկարծ, անսպասելի կերպով, վերանորոգուեց հին կարգը, հոգաբարձուներ ընտրուեցան թէ Շուշում, թէ Երևանում և թէ Թիֆլիսում։ Այդ կարգագրութիւնը ոգեսրեց շատերին, որոնք չէին ուզում հաւատալ թէ մեր հոգեսր իշխանութիւնը վճռել է երես դարձնել ժողովրդից։ Սակայն անժամանակ էր այդ հրձուանիքը ժողովրդին, ճիշտ է, վերադարձրին նրա ընտրողական իրաւունքը, բայց միևնույն ժամանակ դասն գեղահատեր էլ մատուցին։ պարտաւորական հրատարակուեց հոգաբարձութիւնների մէջ երկու-երկու քահանաներ մանցնելը։ Երևանը իր ընտրութիւնների ժամանակ ցոյց տուեց որ ժողովրդական սկզբունքի տեսակէածից այդպիսի պարտաւորութիւնները ազատութեան օահմանափակումն են նշանակում և շնարեց քահանաներ։ Այդ դասից խրատ առաւ Թիֆլիսի առաջնորդ (այժմ պաշտօնից հեռացրած)։ Սուրէնեան արքեսիսկոպոսը, որի առաջարկութեամբ քահանայական դասը բաժնուեց ժողովրդից, մի առանձին կաստա դարձաւ ու առանձնացած ժողով կազմնելով, երկու քահանայ-հոգաբարձու ընտրեց։ Այդ կարգը միայն Թիֆլիսում մնաց, Երևանում և Շուշում քահանաներ չը մնան հոգաբարձութիւնների մէջ։ Մի ընդհանուր օրէնքը, կանոն մտցնել անկարող եղաւ հոգեսր իշխանութիւնը։

Երևանի հոգաբարձութիւնը անցեալ տարուանից գործի մէջ մտաւ և դպրոցի տեսաւթիւնը յանձնեց թիշկ Տատեանին։ Ուստումնական տարուայ վերջում հոգաբարձութիւնն արձակեց եօթը ուսուցիչներ, որոնք ազմուել բարձրացրին և մտան Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանի թէի տակ։ Թէ արքեպիսկոպոսը համաձայն է եղել հոգաբարձութեան հետ, բայց մի քանի օրից յետոյ յայտնում է թէ ինքը սխալուած է եղել ստորագրելով հոգաբարձական որոշումը։ Սուքիաս արքեպիսկոպոսը այնքան լայ յայտնի է մեր մէջ, որ հազիւ թէ հարկաւոր լինի նրա մասին տեղեկութիւններ հաղորդելը, Սկսում են ինտրիգները. հոգաբարձուները, ի հարկէ, հաստատ են իրանց վճռի վրայ, հրաւիրում են նոր ուսուցիչներ։ Բայց էջմիածինը միջամտում է, ոչնչացնում է ժողովրդի ներկայացուցիչների նշանակութիւնն ու իրաւունքները և Պարզեանը կատարեալ յալթանակ է տանում։ Հրատարակուում է կարգագրութիւն որ բոլոր թեմական դպրոցների տեսուչները ընտրուեն հոգեսրականներից։ Երևանի հոգաբարձութիւնը հպատակուում է այդ կարգագրութեան և գոհ այն

հանդամանքից որ գոնէ արձակուած եօթը ուսուցիչների վերաբերմամբ իր կայացրած զժիոր մնում է անխախտ, տեսչական պաշտօնի համար ընարում է Մեօրով վարդապետ Տէր-Մովսիսեանին և Մատթէոս վարդապետ Մատթէոսեանին, ինզրելով էջմիածնից որ դրանցից մէկը հաստատուի տեսուչ։ Սակայն փոխանակ հաստատելու, էջմիածնը մի նոր կարգադրութիւն է հանում, որով ժամանակաւոր տեսուչ է Եօանակում դպրոցի ուսուցիչներից մէկին և բացի դրանից կարգադրում է որ արձակուած ուսուցիչները նորից իրանց պաշտօնին հրաւիրուեն։ Հոգաբարձութիւնը բողոք է ուղարկում։ Էջմիածնից գալիս է մի վարդապետ, որ աշխատում է համաձայնութիւն կայացնել հոգաբարձութեան և Սուքիաս արքեպիսկոպոսի մէջ։ Ի՞նչ պայմանով էջմիածնը որդում է որ արձակուած ուսուցիչներից մի քանիսը իրանց կամքով հրաժարուեն պաշտօնից եւ հոգաբարձութիւնը դրանով բաւականանայ։ Կազմում է ժողով էջմիածնից եկած վարդապետի ներկայութեամբ։ Սուքիաս արքեպիսկոպոսը դրական կերպով, երդումով հաւատացնում է թէ ինքը կը համոզէ ուսուցիչներին հրաժարուել, բայց միւս օրը բոլոր այդ եօթը ուսուցիչներին հրաւիրում է պաշտօնի։

Առ այժմ գործը այս դրութեան մէջ է։ Հոգաբարձութիւնը զեռ սպասում է կարգադրութեան էջմիածնից և պատրաստում է հրաժարական առլ։ Ահա երեանի կրիզիսի պատմութիւնը։ Զեզ նա կարող է թուալ «Հազար ու մէկ զիշերներից» վերցրած մի կտոր, բայց իրողութիւնը այս է, ինչ ուզում էք, կարող էք համարել երեանի դպրոցի այս ողիսականը առաջինն ու վերջինը չէ մեզանում։ Շուշու դպրոցը նոյն անկերպարան դրութեան մէջ է, թիֆիսի Ներսիսեան դպրոցն էլ շուտով նոյն «հարսանիքը» կը սկսէ։

Ե՞րբ կը լինի այս բոլորի վերջը։ Թէև մենք ատում ենք կդերական ողին, թէև մենք դէմ ենք և միշտ պիտի դէմ լինենք կդերական տիրապետութեան, բայց դպրոցների համար աւելի լաւ կը լինէր տեսնել միանգամից կերականութեան կատարեալ թագաւորութիւնը, քան ականատես լինել այսպիսի երերումներին ու խաղերին։ Մի օրէնք, մի հաստատուն, անխախտ կարգ... Ուր է նա։

*
* *

Այս անդամ էլ ուրախութեամբ արձանագրում են մի ուրախալի փաստ մեր գաւառների կեանքից։ Օգոստոսի 26-ին Վենետիկում տօնուեց Մխիթարեան միաբանութեան երկուհարիւրամեակի յօրելեանը։ Այդ դրական տօնախմբութիւնը

արձագանք դտաւ մեր գաւառներում։ Կարսում և Ալեքսանդրա-
պօլում յատուկ երեկոյթներ սարքուեցան ի պատիւ Մխիթա-
րեսնմների. Արասթումանում կայացաւ գրական երաժշտական
երեկոյթ. շատ տեղերից չնորհաւորական հեռազիրներ ուղար-
կուեցան Մխիթարեաններին։ Իսկ Բագւում, հայոց եկեղեցում,
հոգեհանգիստ կատարուեց Մխիթարեանների համար և Եղիշէ
վարդապետ Մուրադեանը քարոզ ասաց։ Այդ առիթով տիրացուա-
կան մամուլի մէջ վայնասուն բարձրացաւ, բայց անցել են այն
ժամանակները, երբ այդպիսի աղաղակները որ և է տպաւորու-
թիւն էին թողնում։

Գաւառը այդպիսի սրտագին դոյցերով վերաբերուեց հայոց
գրականութեան հաղուագիւտ տօնին։ Իսկ ի՞նչ արաւ մայրա-
քաղաք համարուող Թիֆլիսը՝ Ոչինչ։ Ամօթ չէ ասելը...

Ա.